ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քաղաքաշինական եւ տարածական պլանավորման ոլորտում ՀՀ համայնքներին տեխնիկական խորհրդատվության եւ օժանդակության տրամադրման մասնագիտական աջակցության

ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2404-Ն որոշում

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻՆ ՀԱՐՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏԵԼՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» N 2404-Ն **ՈՐՈՇՈՒՄ**.

Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհները և դրանց հարող տարածքներն առանձնացվում են որպես ***քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտներ***, որոնց գոտիների ընդլայնական չափերը սահմանվում են՝

1) բնակավայրերից դուրս տարածքներում՝ միջպետական նշանակության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհի առանցքից՝ 70 մետր, հանրապետական նշանակության պետական ավտոմոբիլային ճանապարհի առանցքից՝ 50 մետր, եթե դրանք չեն ընդմիջվում բնական սահմանափակումներով.

2) բնակավայրերում՝ միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների կառուցապատման առաջին գծի (գոյություն ունեցող կառուցապատման գծի) օբյեկտների կառուցման համար տրամադրված (տրամադրվող) հողամասերի, բայց ոչ պակաս, քան ավտոմոբիլային ճանապարհներին հարող կարմիր գծից 50 մետրի չափով:

ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2404-Ն որոշում

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻՆ ՀԱՐՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏԵԼՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» N 2404-Ն **ՈՐՈՇՈՒՄ**.

Նոր կառուցապատման իրականացումը, գոյություն ունեցող շենքերի ու շինությունների վերակառուցումը և գործառական նշանակության փոփոխությունն իրականացնել սահմանված կարգով՝ ապահովելով բնակավայրերից դուրս տարածքներում ճանապարհի կողային տեսանելիության պահանջները՝ հաշված երթևեկելի մասի եզրից՝

ա) միջպետական նշանակության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների համար՝ 18.0 մետր,

բ) հանրապետական նշանակության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների համար՝ 15.0 մետր:



4.1 **Դասախոսություն 4**

ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2404-Ն որոշում

30 **կմ/ժամ** արագությամբ բախման դեպքում

մահվան հավանականությունը՝ 10 %

50 **կմ/ժամ** արագությամբ բախման դեպքում

մահվան հավանականությունը՝ 40 %

65 **կմ/ժամ** արագությամբ բախման դեպքում

մահվան հավանականությունը՝ 80 %

ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2404-Ն որոշում

Տեսանելիության եռանկյուն





4.1 **Դասախոսություն 4**

ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2404-Ն որոշում

էջ 1

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2005 թվականի
դեկտեմբերի 29-ի N 2404-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԻՍՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿՏՈՒՄԲԻԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԱԾՐԻՆ ՀԱՄՈՂ ՏԱՐԱԾՔԵՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԻՍՏԵՄԻՈՒՄՆԵՐ

ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՍԽԵՄԱ
ՄՇ ՀՈՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - ԳՈՐԻՍ - ՄԵՂՐԻ - ԻՐԱՆԻ ՍԱՀՄԱՆ/ ՏԿՍ/

էջ 2

Հատված 1 /ՄՇ/

էջ 3

Հատված 2 /ՄՇ/



Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
դեկավար-նախարար

Մ. Քոչարյան

ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի «Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում քաղաքաշինական գործունեության իրականացման կարգը» N 792-Ն որոշում

Հարց 1. Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների սահմանումը:

Հարց 2. Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորումն իրականացնող մարմինների իրավասությունները:

Հարց 3. Տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթները հատուկ կարգավորման օբյեկտներում:

1. Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների սահմանումը:

- Տարածքներ, որոնց զարգացումը, հատակագծումը, քաղաքացիների, հասարակության և պետության շահերի ապահովումն իրականացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված հատուկ կանոնների և ընթացակարգերի անհրաժեշտությամբ ու կիրառմամբ.

- **ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐ՝** տարածքը սահմանափակող պայմանական գծեր, որոնցից դուրս տարածքներում սույն կանոնները չեն գործում.

- Սահմաններ, որոնք ամրագրված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի «Գյումրու, Վանաձորի, Դիլիջանի, Ջերմուկի, Վաղարշապատի, Աշտարակի, Գորիսի, Վայքի, Տաթևի համայնքներում (բնակավայրերում) քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներն առանձնացնելու մասին» N 728-Ն որոշմամբ:

ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N 792-Ն որոշում

2. Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորումն իրականացնող մարմինների իրավասությունները (IV)

10. **Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն՝**

1) նախապատրաստում և սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանն է ներկայացնում հատուկ կարգավորման օբյեկտների առաջադրման և տարածքների առանձնացման վերաբերյալ առաջարկությունները, ինչպես նաև այդ օբյեկտներում քաղաքաշինական գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերի նախագծերը.

2) համակարգում է հատուկ կարգավորման օբյեկտների պլանավորման և կառուցապատման գործընթացները, այդ թվում՝
ա. քաղաքաշինական զարգացման հայեցակարգերի և գոտևորման նախագծերի (ներառյալ քաղաքաշինական կանոնադրության) մշակումը,
բ. հատուկ կարգավորմանը վերաբերող իրավական և կազմակերպչական հարցերի, նախագծային փաստաթղթերի քննարկումների կազմակերպումը Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի քաղաքաշինական խորհրդում.

3) հատուկ կարգավորման օբյեկտներում համաձայնեցնում է՝
ա. քաղաքաշինական զարգացման և կառուցապատման ներդրումային հայեցակարգերը,
բ. գոտևորման նախագծերը (ներառյալ քաղաքաշինական կանոնադրությունը) և կառուցապատման սխեմաները,
գ. հատուկ կարգավորման օբյեկտների սահմանների նկարագիրը,
դ. հողահատկացման վերաբերյալ առաջարկությունները,
ե. առանձին օբյեկտների կամ համալիրների ճարտարապետահատակագծային առաջադրանքները և նախագծերի ճարտարապետական մասի էսքիզային լուծումները:

11. **Պետական տարածքային կառավարման մարմինները (մարզպետարանները)** հատուկ կարգավորման օբյեկտներում համաձայնեցնում են սույն կարգի 10-րդ կետի 3-րդ ենթակետով և 12.2-րդ կետով սահմանված փաստաթղթերը:

3. Տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթները հատուկ կարգավորման օբյեկտներում (V)

12. Հատուկ կարգավորման օբյեկտներում տեղական ինքնակառավարման մարմինները քաղաքաշինության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրենց վերապահված գործառույթներն իրականացնում են սույն կարգի 10-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերը 13-րդ կետով սահմանված ընթացակարգով համաձայնեցնելով պետական տարածքային կառավարման մարմինների և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի հետ, իսկ 12.2-րդ կետով սահմանված փաստաթղթերը 14.1-ին կետով սահմանված ընթացակարգով համաձայնեցնելով պետական տարածքային կառավարման մարմինների հետ:

12.1. Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման այն օբյեկտներում (տարածքներում), որոնք ունեն սահմանված կարգով մշակված և Հայաստանի Հանրապետության պետական կառավարման տարածքային մարմինների ու Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի հետ համաձայնեցված կառուցապատման նախագծեր կամ սխեմաներ՝ հողահատկացումների և հողերի գործառնական նշանակության փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունները, առանձին օբյեկտների կամ համալիրների ճարտարապետահատակագծային առաջադրանքների նախագծերը և նախագծային փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության պետական տարածքային կառավարման մարմինների և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի համաձայնեցմանը չեն ներկայացվում:

12.2. ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ (ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ), ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆԸ ՉԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՒՄ՝

1) ժամանակավոր տաղավարների, այդ թվում՝ ավտոտնակների տեղադրման նպատակով հողամասերի առանձնացման առաջարկությունները.
2) բնակելի և հասարակական նշանակության շենքերի ներքին տարածքների վերանորոգման և հարդարման նախագծային փաստաթղթերը, որոնք կոնստրուկտիվ համակարգերի փոփոխություններ չեն առաջացնում, ինչպես նաև՝
ա. բազմաբնակարան շենքերի՝ բակային ճակատների վերակառուցման,
բ. բազմաբնակարան շենքերի ձեղնահարկերի իրականացման,
գ. *բազմաբնակարան շենքերի բակային ճակատներում կցակառույցների իրականացման,*
դ. սեփական տնամերձներում անհատական բնակելի տների և տնտեսական շինությունների կառուցման ու վերակառուցման,
ե. բազմաբնակարան շենքերի առաջին հարկերում նոր բացվածքների իրականացման, պատուհանը դռան վերակառուցելու ճարտարապետահատակագծային առաջադրանքների նախագծերը և ճարտարապետաշինարարական նախագծերը:

13. Տեղական ինքնակառավարման մարմիններն 10-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերը և առաջարկությունները ներկայացնում են պետական տարածքային կառավարման մարմիններ՝ համաձայնեցման: Պետական տարածքային կառավարման մարմիններն 5-օրյա ժամկետում առաջարկություններն իրենց եզրակացությունների հետ միասին ներկայացնում են Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե՝ համաձայնեցման:

14. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն առաջարկություններն ստանալուց հետո 10-օրյա ժամկետում պետական տարածքային կառավարման մարմիններ է ներկայացնում իր եզրակացությունը, իսկ վերջիններս համապատասխան եզրակացությունները 2-օրյա ժամկետում ներկայացնում են տեղական ինքնակառավարման մարմիններ:

14.1. Սույն կարգի 12.2-րդ կետով սահմանված փաստաթղթերը տեղական ինքնակառավարման մարմինները ներկայացնում են պետական կառավարման տարածքային մարմիններ՝ համաձայնեցման: Պետական կառավարման տարածքային մարմիններն իրենց եզրակացությունները 5-օրյա ժամկետում ներկայացնում են տեղական ինքնակառավարման մարմիններ:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՈՒՆ